ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ /Հ. Կոստանյան/

«31» 08 2023թ.

Լոռու մարզի ք. Վանաձորի Հ. Թումանյանի անվան N 3 հիմն. դպրոց

9-րդ Ա դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Սյուզաննա Առաքելյան

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2023-2024» ուստարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

9-րդ Ա դասարանը՝ թվով 30 աշակերտ,18 տղա և 12 աղջիկ, շատ կազմակերպված և համերաշխ դասարան է: Կան և՛ բարձր, և՛ բավարար առաջադիմություն ունեցող աշակերտներ: Չառաջադիմող աշակերտներ չկան: Բանիմաց են, ազնիվ, ճշտախոս, պատրաստակամ և ընկերասեր: Միրով համագործակցում են միմյանց հետ: Ուսումնառությանը վերաբերում են ամենայն լրջությամբ:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Դաստիարակչական գործընթացում ամեն ինչ կարևոր է և ունի իր նշանակությունը: Չի կարելի անտեսել և ոչ մի գործոն: Դաստիարակությունն ու ուսուցումը միմյանց հետ կապված և միմյանց փոխադարձաբար լրացնող գործընթացներ են: Դաստիարակչական գործունեության մեջ կարևոր է համարվում ուսուցման և դաստիարակության մեջ հաջողության հասնելը: Հաջողությունը ծնում է ակտիվ աշխատելու լրացուցիչ ցանկություն, աշակերտի մոտ ձևավորվում է արժանապատվություն: Սա ուսուցման, դպրոցի, գիտության և աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման հաջողության գրավականն է: Բոլորս էլ լավ աշխատում ենք այն դեպքում, երբ զգում ենք հաջողության բերկրանքը, մեզ զգում ենք ավելի կարող և լի ենք դրական զգացմունքներով և հույզերով: Սովորողների բազմակողմանի դաստիարակությունն ապահովելու համար անհրաժեշտ է համակողմանիորեն կազմակերպել նրանց գործունեությունը, այլ ոչ թե ստեղծել տարբեր միջոցառումների պարզ միագումար: Դաստիարակչական միջոցառումները լրացնում, ընդլայնում, միահյուսում, որակապես նոր մակարդակի են բարձրացնում անձի գիտելիքները, ունակությունները, հմտությունները, դիրքորոշումը և այլ հատկանիշներ, որոնք ձևավորվել են գործունեության հիմնական տեսակների միջոցով: Քանի որ սովորողները զարգանում և ձևավորվում են գործունեության ընթացքում, ապա մեր գլխավոր խնդիրն է լավագույն ձևով կազմակերպել գործունեության այն տեսակները, որոնք տվյալ տարիքում արդյունավետ են զարգացնում և ձևավորում աշակերտի անձը:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր

դաստիարակություն

Հոգևոր արժեքների նկատմամբ որոշակի վերաբերմունք ձևավորել, ճիշտ գնահատել արժևորել այն: Մենք քրիստոնյա ենք, սովորողների մեջ սերմանել հավատ, բարություն, ներողամտություն, հոգևորը գնահատելու կարողություն: Անհատն արժևորում է հոգևոր հարստություն:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Զարգացնել անձի մեջիրականության նկատմամբ գեղագիտական վերաբերմունք, գեղեցիկն ընկալելու ունակություն: Այն կազմում է անհատի զարգացվածության զգալի մասը: Զարգացնել արվեստում գեղեցիկի վերաբերյալ մտածողություն:

3.2 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Հայրենասիրությունն սկսվում է դպրոցից: Սովորողները պետք է տոգորվեն գիտակցված հայրենասիրությամբ, ճանաչեն մեր հայրենիքը, պատմության դրվագները, մշակութի գանձերը: Կարևորել ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը անձնավորության համակողմանի և ներդաշնակ զարգացման կարևոր բաղադրիչ է: Զարգացնել անձի բարոյակամային հատկանիշները, նպաստել սովորողներիառողջության պահպանմանը: Հարգանք ձևավորել սովորողի մեջ յուրաքանչյուր աշխատանքի նկատմամբ, ձևավորել և զարգացնել աշխատասիրությունը: Սերմանել բարեխղճություն յուրաքանչյուր աշխատանքում, նվիրվածություն և նպատակասլացություն:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակության ձևավորման կարևոր օղակներից է ձևավորել սեր և հարգանք յուրաքանչյուր աշխատանքի նկատմամբ: Աշխատանքն է գեղեցկացնում մարդուն:

3.6 Բնապատհպանական դաստիարակություն

Շատ կարևոր է էկոլոգիական դաստիարակությունը դպրոցում: Սովորողները կկարողանանտեսնել, գնահատել բնապահպանական իրողությունները:

4.ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Խթանել դպրոց-ընտանիք համագործակցությունը: Այդ փոխհարաբերության հիմքում պետք էընկած լինի միմյանց նկատմամբ վստահություն, փողադարձ հարգանք, փոխօգնություն: Անհրաժեշտ որակների, հատկությունների ձևավորման պայմանների ստեղծում:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

N	Ուսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակությունը	Կատարող
1	օգնել իններորդ դասարանցիներին հարմարվել նոր կրթական պայմաններին	Դասղեկ
2	ստեղծել առավել բարենպաստ պայմաններ յուրաքանչյուր երեխայի բացահայտման և զարգացման համար	Դասղեկ
3	մարդկային համընդհանուր արժեքների, ընտանեկան պաշտամունքի կրթություն և աշակերտների առողջ ապրելակերպի ձևավորում	Դասղեկ
4	հայ մշակույթի կրթություն անհատական զրույցների, դասի ժամերի,թույլատրելի դեպքերում նաև համերգների, կինոթատրոնների միջոցով, դասարանում,	Դասղեկ
5	աշակերտների հաղորդակցական հմտությունների զարգացում	Դասղեկ
6	«Ես» -ի բացահայտումը անհատական ստեղծագործական նախագծերում, ցուցահանդեսներում և այլն	Դասղեկ
7	Աշակերտների շրջանում ակտիվ կյանքի դիրքի ձևավորում և հայրենասիրության դաստիարակություն	Դասղեկ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԵՐ

Անցկացման օրը	Միջոցառման բովանդակությունը	Կատարող
01.09.2023	Աշակերտական ակտիվի ընտրություն	Դասղեկ, աշակերտներ
08.09.2023	Հայաստանը ես եմ	Դասղեկ, աշակերտներ
15.09.2023	Որակյալ կրթություն՝հզոր պետություն	Դասղեկ, աշակերտներ
22.09.2023	Հայրենասիրությունը սկսվում է տանից	Դասղեկ, աշակերտներ
29.09.2023	Բոլորս տարբեր ենք և դա է մեր հարստությունը	Դասղեկ, աշակերտներ
06.10.2023	Արդյոք միշտ են ծնողները ճիշտ	Դասղեկ, աշակերտներ
13.10.2023	Հաղթանակ և պարտություն	
20.10.2023	Աշունն ու Տերյանը	Դասղեկ, աշակերտներ
03.11.2023	Կարծրատիպեր և նախապաշարումներ	Դասղեկ, աշակերտներ
10.11.2023	Բարոյական արժեքներ որ իմաստավորում են մեր կյանքը	Դասղեկ, աշակերտներ
17.11.2023	Հայտնի մարդկանց կյանքի պատմություններ	Դասղեկ, աշակերտներ
24.11.2023	Ով է իսկական ընկերը	Դասղեկ, աշակերտներ
01.12.2023	Գնահատիր ինքդ քեզ	Դասղեկ, աշակերտներ
8.12.2023	Բնական աղետներ	Դասղեկ, աշակերտներ
15.12.2023	Ամանորը տարբեր երկրներում	Դասղեկ, աշակերտներ
22.12.2023	Առաջին կիսամյակի ամփոփում	Դասղեկ, աշակերտներ

12.01.2024	Ձյու՛ն, դու ինձ երգիր քո երգը	Դասղեկ, աշակերտներ
19.01.2024	Հայոց կանգուն բանակ	Դասղեկ, աշակերտներ
26.01.2024	Պատերազմ և խաղաղություն	Դասղեկ, աշակերտներ
02.02.2024	Հայը հայերենով է հայ	Դասղեկ, աշակերտներ
09.02.2024	Մասնագիտություն,որ ինձ ավելի հոգեհարազատ է	
16.02.2024	Իմ կարդացած վերջին գիրքը	Դասղեկ, աշակերտներ
23.02.2024	ՈՒՄ եմ ես վստահում գաղտնիքս	Դասղեկ, աշակերտներ
01.03.2024	Մայրս միակն է աշխարհում	Դասղեկ, աշակերտներ
15.03.2024	Նոր կյանքի նոր մարտահրավերները	Դասղեկ, աշակերտներ
22.03.2024	Ոչ ոք չի մոռացվել ,ոչինչ չի մոռացվել	Դասղեկ, աշակերտներ
05.04.2024	Թևավոր երազանքներ	Դասղեկ, աշակերտներ
12.04.2024	Գրագետ մեդիասպառող	Դասղեկ, աշակերտներ
19.04.2024	Հայոց մեծ եղեռն	Դասղեկ, աշակերտներ
26.04.2024	Արվեստը մեր կյանքում	Դասղեկ, աշակերտներ
03.05.2024	Վարվեցողության կանոններ	Դասղեկ, աշակերտներ
10.05.2024	Թանգարան բաց երկնքի տակ	Դասղեկ, աշակերտներ
17. 05.2024	Հայկական ավանդույթներ	Դասղեկ, աշակերտներ
24. 05.2024	Երկրորդ կիսամյակի ամփոփում	Դասղեկ, աշակերտներ

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

	ազգանուն, անուն, հայրանուն	հեռախոս
Նախագահ	Մեհրաբյան Սիրուշ	093-36-12-73
տեղակալ	Դալլաքյան Ամալյա Հովհաննիսյան Կարինե	077-90-54-83 093-79-53-11

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

	ազգանուն, անուն, հայրանուն
Ավագ	Էլեն Ափինյան
օգնականներ	Անգելինա Խառատյան Լիանա Մարգարյան

ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

1. Երեխաների թիվը դասարանում՝ 30

ա) աղջիկ՝ 12

բ) տղա՝ 18

2. Ընտանիքների թիվը՝ 30

3. Անապահով ընտանիքների թիվը՝ 5

4. Բազմազավակ ընտանիքների թիվը - 11

Դասղեկ՝ _____ /Ս. Առաքելյան/